

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյո համար 12 Տր.  
Տարեկան  
Վեցամսեայ 6 »  
Արսասահմանի համար տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »

Անկերկայի համար 3 Տր.  
Տարեկան  
Վեցամսեայ 4.50 »

Մանուցան սոյր առաջին երեսին համար 40 սխի վերջին երեսին համար 20 սանթիլ Կ. երեսին առաջին անգամներու համար 20 0/0 գեղջ կըլլայ:

Վառնայի համար 4 Տր. 40 սանթիլ

# ՇԱԲԱԹ

R. P. Kalémcarian,  
(Autriche)

Mechitharistengasse  
W. 4.  
Vienne

Le journal hebdomadaire  
ph. անս հաս.

Редакция на вѣстникъ  
„Шаржумъ“  
Варна

Redaction du journal  
„Charjoun“  
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար  
ձեռք ( 20 ՍԱՆԹԻԼ )

Պուշկարինյո համար  
ձեռք ( 15 ՍԱՆԹԻԼ )

Գրութիւնք եւ չեն տրուիր

## ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄՐԱՆՈՒՆ ԶՈՐԵԲԵԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

«ՇԱԲԱԹ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

### ՇՆ ՈՐՀԱԿԱԼԻՔ

Փ. Պօլոյ Չիլիա՞ և Սերեմանան ընտանիքները խորին շնորհակալութիւն կը յայտնեն իրենց բոլոր ազգակներուն, բարեկամներուն և ծանօթներուն, որոնք ողբացեալ Ղ Ե Ի Ո Ն Դ Ի Ն Գրան մահուան անթիւ ներկայ գտնուած են յուզարկուողութեան հանդէսին և յայտնած իրենց ցաւակցութիւնները:

### ՄԵՆՔ

Մեր շուրջը՝ քաղաքական աշխարհին ապրած այս տագնապալի օրերուն, ուր ետեւէ ետեւ կուտակուած վայրոյթները մէկ օրէն միւրը շղթայապէս իր կրկնապանան, մենք՝ կարծես զեռարիւնտ անցեալին յիշատակէն սահմակած՝ կը գեղեցիկ վերջնական որոշումը տալու:

Միջոցաւ մեր շուրջ կողմէն զենքի շահուններ, թնդանօթի խուլ գրգռներ կը լսուին. մինչդեռ վայրկեան վայրկեան իրարու վրայ նետուել սպառնացող վիթխարի բանակներ կը խլրտին և իրենց զանակները կը սրեն, մինչդեռ ամենէն հսկայ բռնակալութիւններն անգամ ապագային մութ հեռանկարէն սարսափած իրենց վերջին պատրաստութիւնները կը տեսնեն, մենք՝ գուցէ տակաւին մեր կրած անօրինակ հարուածին աղղեցութեան տակ՝ չենք կրնար շափել զալիք շարիքներուն մեծութիւնը:

Մենք չենք կրնար տակաւին կատարելապէս բմբաւել թէ գուցէ վաղուան օրը ճակատագրական վճռական պատերազմներուն օրը պիտի ըլլայ, պիտի ելլեն ազգերը ազգերու դէմ, երկիրները երկիրներու դէմ. գուցէ վաղուան արշալոյսին հետք այլ եւս պիտի բռնկի այն համաշխարհային հրդեհը, որ պիտի ոչնչացնէ կուռելու պատրաստ զտնուողները և գոյութիւններն պահպանել չկրնողները:

Ո՞վ կրնայ ըսել թէ՛ Եւրոպայի խելօք զիւանագէտները պիտի յաջողին զեռ երկար ժամանակ պահպանել այն բռնապետիկ խաղաղութիւնը, որ կիզ իքներու, անամօթ սուտերու և դժոխային դաւերու վրայ հիմնուեցաւ և որ փոքրիկ ազգերու սարկութեան շղթաներն աւելի ամրապնդեց. այն ոճրագործ խաղաղութիւնը՝ որ քրիստոնէութիւնը վայրագ մահմէտականութեան սուրին մատնեց, աշխարհի ամենէն անմեղ ազգերէն մէկը կոտորել տալու տիեզերական եղբունը գործեց:

Ո՞վ կրնայ երաշխաւորել թէ վաղը չպիտի պայթի վառօդի և ուժանակի այն հսկայ կոյտը, զոր խաղաղ յառաջադիմութեան սիրահար եւրոպացիները գիզեցին տարիներէ ի վեր՝ իրարմէ գաղտնի:

Մեզի համար սակայն աւելի ցաւալի կէտն այն է որ՝ այս զըզրգեցնող իրարանցումին մէջն իսկ հայր մէկն է ամենէն անշարժներէն:

Մինչդեռ բոլոր ազգերը և բոլոր երկիրները կարտորան զինուորի՛ պատրաստ գտնուելու համար մեծ անակնկալին առջև, անտարբեր է հայը: Հայը, որ ունի արդէն իր գոյութեան նուիրական կռիւրը և որուն կեանքը վտանգի տակ է արդէն առանց եւրոպական մեծազորութեան պատերազմներու ալ:

Հարկ էր որ ամենէն առաջ մենք զինուորէնք:

Մենք սարսափներու մէջ կապրինք արդէն:

Մեր պատերազմը սկսած է արդէն:

Քո՛ւ, հարկ էր որ մենք ալ ունենայինք մեր բանակը, հայ անձնուէր հայրենասէրներու անպարտելի բանակը՝ յեղափոխութեան հօր հաւատքովը խանդավառ մեր անզուգական լեռներուն վրայ կազմու պատրաստ:

Մենք չունինք մեր պետական գանձարանը, բայց հայեր կան որ ունին գանձեր. թող նուիրուին անոնք ազգային մեծ գործին:

Քիւր երանի անոնց որ՝ իրենց արիւնով պիտի գրոշմեն հայկական անկախութեան վճիռը՝ երկրագնդի ճակտին: Երանի անոնց ալ որ իրենց գանձերովը պիտի գնեն երջանկութիւնը հայ ազգին և անոր փառքը ապագայ դարերուն համար:

Թող համախմբուին ամէնքը յեղափոխութեան սրբազան գրոշին տակ՝ որ բոլոր գերիներուն փրկիչը եղաւ:

Թող հայութիւնը հարուստին և աղքատին, հօրին ու տկարին վսեմ դաշնակցութիւնը կնքէ հոն՝ հայ յեղափոխութեան նուիրական գրոշին տակ, որ ազգային մեծ տառապանքին արգանդէն բուսած անմահ հերոսներուն արիւնովը սրբացաւ:

Մեծ է տառապանքը, թող մեծ ըլլայ նաև կռիւրը:

Մենք, որ այնքան երկար դարեր կրցանք անսասուն ժայռի մը պէս մաքառել ժամանակին կատաղի հեղեղներուն դէմ, իրաւունք ունինք ապրելու:

Եւ պիտի ապրինք:

Ո՞րն է այն ազգը, որուն փրկութեան համար պէտք է որ է՛ն մեծ պայքարը մղուի:

—Մենք:

Եւ ո՞րն է այն ազգը որ մեր ազատութեան համար պարտաւոր է է՛ն մեծ զոհողութիւնները ընել:

—Դարձեալ մենք: Վ Է Տ Ա

## ԶԷՅԹՈՒՆ

Արտասահմանի քանի մը թերթերը՝ Գոհիթի ֆիլիսիֆէն առնելով՝ հրատարակեցին արդէն այն աղէկէզ լուրը, որ Զէյթունէն կուգայ:

Գրուեցաւ թէ հոն՝ այդ պանծալի լեռներուն վրայ՝ երկարատեւ ապստամբութիւններէն, արիւնալի կռիւններէն յետոյ այժմ

յոգնած ու վիրաւոր՝ նիւթապէս կակածալի վիճակի մը մտանուած է հայութիւնը:

Կաշարի Զէյթունցի նահատակներուն թողած որբերը հրանդ, անոք և անօթի են: Մարդասպաններու վեհապետին սկսած դժոխային գործը բնութիւնը ինքը առաջ կը տանի հիմա:

Մաղկի աւերիչ հիւանդութիւնը օրէ օր կը ճարակի հոն՝ օրական 50 հատը սպաննելով այն դժբախտ որբերէն, առւեծի այն ձագերէն, որոնց մոռնիւնը վաղը պիտի գողացնէր արիւնարբու տիրանը իր զահուն վրայ:

Օրական յիսուն հատ:

Զէ՛ք գողար այս սոսկալի թիւէն:

Եւ չէ՛ք կարծեր որ մեր ամենաորբազան պարտականութիւններէն մէկն է, նոյն իսկ—եթէ կուզէք—մեր շահուն համար, կայծակի արագութիւնով բժշկել և դարման հասցնել անոնց, այդ ճշմարիտ հայերուն, հին հին դարերէ ի վեր անեղծ մնացած այդ հայերուն:

Անոնց հոգիին մէջ մինչև հիմա դեռ վառ մնացած ինքնապաշտպանութեան շուրջ, կուռի եռանդը և պատուութեան տենչն էր որ վերկեցին հայ անունը մեր վերջին արկածալի կեանքի միջոցին:

Ու հիմա՝ ամեն անգամ որ ուզեն հայը ներկայացնել իբրև սարկահոգի, հերոսական կուռի անընդունակ մի ժողովուրդ՝ մենք ազգային վեհափառ հպարտութիւնով մը ցոյց կուտանք Զէյթունցիները՝ իբրև կենդանի ապացոյց:

Անցեալ աշնան՝ երբ Մակեդոնիոյ ապստամբութիւնը գեռ իր սկզբնական խանդավառութեան մէջն էր՝ պուլկար բարեկամ մը անկեղծօրէն երեսիս նետեց սախօսքերը—որոնք դժբաղդաբար ցաւալի ճշմարտութիւններ կը պարունակէին. «... Մակեդոնիան պիտի փրկուի, որովհետեւ Մակեդոնացի ժողովուրդը պատրաստ է զոհողութեան, պատրաստ է

կուռի, հետեւաբար և արժանի ազատութեան. իսկ դուք, հայեր, մեռաք միայն: Հաւատաւոր կը ցուցիմ ասիկայ ըսելու. դուք դեռ ցոյց չառիք թէ ազատ կեանքի մը արժանի ըլլալու չափ հասունցած ազգ մըն էք:

— Լուէ՛, պարոն, բնի գոռու շեշտով մը, մի՛ նախատեր այն պիտի ժողովուրդներ, որոնց քով մակեդոնացիները դաճածներ են գուցէ: Յիշէ՛ Սասունը, յիշէ՛ Ձէյթունը...

— Ա՛հ, ներէ՛, ըստ բարեկամ՝ ձեռքս սեղմելով, իրաւունք ունիս:

Ճառագող Ձէյթունին ձեռք մեկնելու համար արտասահմանի մէկ երկու թերթիքը հանգստեակութիւնը քսած են արդէն:

Իր ամենէն մեծ պարտականութիւններէն մէկը ոտքի առկա անած պիտի ըլլար Պուլկարիոյ հայտնութիւնը՝ եթէ չմասնակցէր այս ազնիւ և միանգամայն հայրենա սիրական գործին:

Թող Պուլկարիոյ հայտնութիւնն աչքանայ իր հանգանակութիւնը: Մեր կարծիքով այս մասին նախաձեռնարկ ըլլալու դերը ամենէն աւելի կը յարմարի Վառնայի պատ. Թաղական խորհրդին:

Թո՛ղ հրաւէր ուղղէ անկիւայ Պուլկարիոյ բոլոր քաղաքներու թաղականութիւններուն:

«ՇԱՐԺՈՒՄ» միշտ պատրաստ գտնուած է իր էջերը արամադրել ազգօգուտ ձեռնարկներու: Անկիւայ սիրով պիտի յատկացնէ այս անգամ ալ անկիւն մը՝ Ձէյթունի հանգանակութեան՝ որը օրին հրատարակելու համար հարկ եղած յայտարարութիւնները, տեղեկութիւնները և նուիրուած գումարները:

Կիսենք մեր վերջին պատանանգամ Ձէյթունցիին հետ: Տ. Ա.

ՄԱԿԵՊՈՆԱԳԻ ՀԵՐՈՐԸ

Մակեդոնացի հերոսը սկսվեց և զիւրազրտական մամուլով գովել: Անգլիական Դե Կրաֆթի հանգէսի վերջին թիւում յայտնուեց հերոսի մասին՝ Բօրիս Մարաֆօֆ խորագրին տակ մի հակիրճ յօդուած, ուր հերի նակը ծանօթացնում է ընթերցողին Մարաֆօֆին:

Միւնակի գրեթէ մի քառորդ մասը գրաւում է Մարաֆօֆի հայրուկի տարազով հանուած նկարը, ու հեղինակը այսպէս է ասում. «Մենք կը պատասխանենք այս հարցման՝ թէ ո՞վ է Բօրիս Մարաֆօֆը—Մակեդոնացի, կլասիկ յեղափոխութեան մի ներկայացուցիչ: Եւ մի քանի էլ հակիրճ ծանօթութիւններ է տալիս:

Ահա Մակեդոնացիք՝ իրենց անվերջութեամբ ու սողունութեամբ՝

աստիճանաբար մտնում են ազատութեան ճանապարհի վերայ գգված դրօշին. ու վաղ թէ անագան ձեռք կը բերեն նրանք այդ դրօշին՝ թափված արիւնով ազատութիւն կնքած ու կը պարզեն Մակեդոնիոյ վեհ սարերում: Մակայն ինչ արանք մենք հայերս, տասնհակ տարիներ ընթացքում եւ ինչ այժմ:

Ահա Մակեդոնացիք մի երկու տարւայ ընթացքում կարողացան գրաւել զիւրազրտների ուշադրութիւնը ու այսօր Մակեդոնիա՝ եւրոպական մամուլ պարբերական նիւթ է: Ներանք այլեւս եւրոպիկ կամայականութեան ենթակայ չեն լինի: այլ ինքնավար կեանք կունենան:

Իսկ մենք մենք կը մնանք նոյնը, սուլթանների կամայականութեան մատնուած սարուկ, Լիւր, Լիւր այդ դու՛ ո՞վ քնած հարուստ: Եթէ դու քո փողից մի մաս չի յատկացնես սուրբ գործին, անտան մենք սարուկ ենք մնալու, սարուկ:

Ին փոյթը չէ թէ Հայաստան իրա տարաբարդ գաւազան հետ կը հեւայ վայրագ ուժի բնագործիկ թրմահանութիւնները: Կը դայ մի օր, ուր դու կը զգաս թէ՛ պէտք էր աշակցել անձնուրաց երիտասարդին՝ կուղ ֆեդայուն, որ ամէն ինչ մտցած՝ սարեր ու ձորեր թափառելով, իր անձը գոնելու տրամադիր՝ ձգտում է պահպանել իրա հայրենիքը եւ իրա անկարող եղբարցը: Մակայն շատ ուշ կը լինի:

Մարդկային օրէնքը պարտք է դրնում քո վրայ, երբ դու էլ միւնոյն ազգի գաւազն ես, որ պէտք է պարտաճանաչ գտնեն հանգէպ հասարակական անհրաժեշտ պահանջի:

Սիրակ Ա. ամենակ

ՆՈՐ ԹԵՐԹ ՍԸ

THE STRUGGLE, for Liberty of Armenia and Macedonia

Բաց ի Վերո Արմէնիայէն բաւական երկար ժամանակէ ի վեր չկար այնպիսի թերթ մը, որ իրեն նպատակ ընտրած ըլլար օտարին ներկայացնել մեր դատը՝ իր իսկական գոյնով եւ էութեամբ: Այդ պէտքը շատ զգալի դարձած էր ամէնուն եւ մասնաւոր անգլիախօս հասարակութիւններու համար, որոնցմէ մեծամեծ ակնկալութիւններ ունեցած ենք միշտ:

Անշուշտ երբ այս սողերը կը գըրենք, մեր նկատողութենէն բոլորովին հեռի է Բարիքի համբաււոր «Մամէնիւն» որ իրեն նուիրական նպատակ ընտրած է հայ անունը վարկաբեկել, ու վատահամբաւել, ցոյց տալով ամենամեծ դէմքերէն ոմանք իրրեւ ճարպիկ գողեր, սրիկաներ և...

չունենք: Այս, հայութեան անցեալն ու ցաւալի ներկան ճանչնող թերթ մը՝ իսկապէս հարկաւոր էր, և այդ պէտքը Տր. Մակարեան կը ջանայ մասամբ լրացնել, իր տրամադրութեան տակ մէկ մասը ունենալով վերջերս Մ. Նահանգներու մէջ հրատարակուել սկսած թերթի մը, որ պիտի խմբագրուի Մակեդոնացի հայրենասէրէ մը և պիտի պաշտպանէ մակեդոնական դատը:

Թերթին միակ նպատակն է Ամերիկացի հասարակութեան առջեւ դնել Հայկական ու Մակեդոնական հարցերը պահանջելով անոնց վերջնական լուծումը ինչպէս որ իր անունն ալ ցոյց կուտայ մեզ:

THE STRUGGLE, for Liberty of Armenia and Macedonia

(Ճիզը, Հայաստանի և Մակեդոնիոյ ազատութեան համար):

Շիտակը, այս երեւոյթը ուրախաւիթ ըլլալէ աւելի յուզիչ բան մը ունի իր մէջ: Հոն կը տեսնենք, դարերէ ի վեր, բնապետներու սուլթանները եւ հարստարուող ազգերու եղբայրութիւն մը, որ անսահման ցաւի մը մէջ, ձեռք ձեռքի տուած՝ վճռական ձեռքն է որ ի գործ կը դնեն, իրենց յոգքն ու մարդկային արդար պահանջը անտարբեր օտարին առաջ պարզելու համար:

Տր. Մակարեան իր բաժնին մէջ պիտի ներկայացնէ օտարներուն Հայկական ներկայ վիճակը և կացութիւնը երկրին մէջ՝ առօրեայ գէպքերը ու արիւնհեղու թիւնները պատմելով:

Մենք չենք գիտեր թէ որքան կարողութիւն ունի անիկայ ասանկ զժուարին գործ մը ստալ տանելու համար, քայց իր առաջին յօդուածը ապացոյց մըն է թէ, իր ծրագրերը հաստատ ու նպատակայարմար հիմունք վրայ հաստատուած է: Այս անգամ իր ամբողջ ճիզը թափած է ծանօթացնել պարսկա-թրքական սահմանազխի վրայ տանջուող 40,000 զոքող հայերու դրութիւնը, և անմիջական օգնութիւն հայցել անոնց համար, ինչ որ, վստահ ենք թէ, անպատշաճ պիտի մնայ, քանի որ Ամերիկայի հայ գաղութին ալ մեծ եռանդով կաշխատի այդ մասին:

Կը յուսանք թէ Տր. Մակարեան չը պիտի բաւականանայ լոկ մեր թշուառութիւնն ու խեղճութիւնը ցոյց տալով օտարին, այլ հետեւելով իր պաշտօնակցին՝ պիտի ջանայ հետզհետէ երկուսն հասնել, զիսկներու և մոխիրներու մէջ տապալակող հայերուն վեհութիւնն ու սնկահեղու թիւնը, բնականներու դարձուր ճշունէրու և հարստահարութեանց ներքեւ տակաւին աննրկուն մնացած հայը, մանաւանդ հայ յեղափոխականը—իւր խրատ ու յաղթական լեռներուն հաւատարիմ խիզախ ֆէտոյիս, որոնք այսօր, բնապետական լծին ներքեւ, ազատագրումի կոչն է որ կը մղեն, որոնք շարք մը վարձկաններու բերնով, եւրոպական մամուլին մէջ ծանօթանալ սկսած են իրրեւ սրիկաներ, սաղակներ և խոսվարարներ... այս, այդ հասողութիւն է որ պէտք է վտարել օտարին մէջէն և ցուցնել կոռուզներուն սրբազան ուղին:

Ինչպէս կերի, ի, պ. Շուքրօֆի նկատողութենէն ալ վրիպած չէ օտար մամուլի այս աղքատ ընթացքը, և իր առաջին թիւին մէջն իսկ ցոյց կուտայ թէ ո՞վ է այսօր թշնամիին ճշուն մեներուն ներքեւ այնքան յամառօէն մաքսողը և ինչ կանգամանքներ ստիպած են զինքը այդ վճռական միջոց: Ահա գեղեցիկ կտոր մը այս նոր թերթին:

«Մամուլը շատ մը պարագաներու մէջ, ինչ ինչ կոհեմներ աւետեց թիւրքերու և Մակեդոնացի յեղափոխականներու միջև: Ասոնք այն մարդիկն էին որ մաքսոսեցան սոյ կոհեմներու մէջ, որ թրքական հարստահարութիւններէն թողած իրենց սուներ, քաշուած էին լեռներ, և որոնց փոխուսէն յետոյ, իրենց կիներն ու քոյրերը թրքական հարէմները քաշ-

կոտուած ու մանկոտները մորթոտուած էին: Անոնք այն մարդիկն էին, որ հայրենի օճախին մէջ մէկը չունին քովը վերադառնալու: Վերակ բունը որ կը մնար իրենց ընտանիքներ, խորխա լեռն էր, հաւատարիմ անտարբեր սիրալի հրացանը:

«Անոնք մէկը չունէին իրենց վրայ ողբալու, իրենց շիրմին վրայ արտասուելը մը չկար. լեռնային արձիւք միայն իրենց գիակներուն կապալուր: Այս յուսահատ գրուածքն անվանոնք ուրիշ խորհուրտ բան մը չունի, քայց միայն վրէժք.— վրէժք անոնց որոնց սուները, երջանկութիւնը, անդորր կեանքի ակնկալութիւնները փճացան: Եւ իրենց մնացած միակ ասանդն էր վրէժք. անոնք կուրեցան վեհօրէն, իրենց տկար նեւերը ուղղելով թշնամիին վրայն. ոմանք ինչպէս են հիմա, ու իրենց սուրբները կը հանգչին խոր ձիւնին ներքեւ: Չը պիտի վրդովենք անոնց խաղաչները, մինչև որ գարունը նոր յուսահատներ երեսն բերլ կոխը մշտն ջննատրելու համար:

Ահա օրինակելի նմոյշ մը, վրժառու յեղափոխականին յա՛գուրդ ետանդը ցոյց տուող, եւ միթէ այս քաղաքի գաս մը չէ՞ մեր այն բոլոր թանձրամիտներուն համար ալ, որ 300,000 զոհերու արիւնով կազմած լեռնէն յետոյ դեռ չեն համոզուիր թէ, կոռուզները կենդանի բողբոջներ են ինկաններուն, և անոնք միայն պիտի կրնան վերջ մը գնել այս ամէն ցաւերուն:

Սրտագին կը շնորհաւորենք ար. Մակարեանը իր ձեռնարկին համար: Անտարակոյս ասիկա նախադուր պիտի ըլլայ աւելիին, և կը յուսանք որ, Ամերիկայի հայ գաղութը և նմանաւանդ ուսանող խմբակը չը պիտի զլայնայ իր զգալի աջակցութիւն այս անձնուիրական գործին:

ՄԵՆԱՍՈՐ

ՊԱՌԱՎԵՏԻՉ ՊԱՏՈՒՆԵԼԻՆ ՇՈՒՄԼԱՅԻ ՄԷՉ

Շարաթ իրիկուն կառախուած տեղս հասա Չիթճին, եւ կիւրով առաւօտ լեցիւք թէ անիկայ բողբոջականաց ժողովարանին մէջ պիտի խօսի ազգային կարիքը խնդրելու վրայ: Կարգ մը ազգայիններ հետաքրքրուելով այդ հարցով, ուղեցին ներկայ գտնուել փոքրուած կողորդիլուի կեղծ ալցունքներուն հանդիսատես ըլլալու: Եւ սկսալ խեղաթիւրելով, թէ և էր ասանաբանութեան միջոցին, կրճական եւ ազգային շատ մը խնդիրներու մէջ հակասութիւններու ծուղակը դէկաւ, քայց իր ճախրած անդը դէտողութիւններ ընել անյարմար լալու, ստիպուեցանք լուծել պահել, իր շարժումները նոյնք յիմար էին որքան քորովի ձեւըրած պոռոտախօսութիւնները: Քորովի յաջողեց աղօթք մը, յետազգաւէր(ւ) պատուելին ներկայացան մի քանի անձինք՝ շատ մասնաւոր ըլլալու համար ամերիկական պապի թիւրք

Լուծիս համեմատ նոյն իրիկուն

երկու հնչակեաններ պատուելիին բը- նակարանը երթալով, երկար բարակ խօսած են Հնչակեան կուսակցու- թեան անցեալ եւ ներկայ դէպքե- րու մասին. այս խնդիրներու մէջ պատուելիին խօսքերը միշտ ճիշդ լի- թական ու խուսափողական եղած են. եւ երբ մէջեւեղ նետուեր է Շահրի- մանի անունը պատուելիին շատ ճիշդ թափեր է իր դաւակից բնկերը պաշտպանելու. սա թափոված խօս- քերով, «Շահրիմանը ընտրուած է ծղկապատէն... ես Պուլիարիոյ մէջ թոյնի անոր մասին... առաջուց չէի ճանչնար...» եւն:

Խեղճ պատուելիին այ, անձուծի փաստերը, չիտակը զըռուանք եւ միանգամայն զայսոյն պատճառեցին մեզ. եւ վերջապէս սա եզրակացու- թեան հասանք թէ՛ Չիթիմի, Շահ- րիման եւ ասոնց ձեռք գտնուած մարդամեքենայները վոհմակին մու- սին բոլոր գրուածներն ու բուռած- ները շատ ճիշդ են:

Հայրենեաց սիրով վառուած... պատուելիին առաջարկուեր է, ազ- գային ընթերցարանի մէջ խօսիլ, երկուստեք կարծիքներ փոխանակել. մէկ խօսքով, յայտ փողովդիտան Հնչակեան յեղափոխական կուսակ- ցութեան մէջ անցած գարձանները ցուտարանը, սակայն մերժած է պատ- ուելին այս սղնի առաջարկը. իւր զրկելով թէ՛ «ես պիտի խօսիմ եւ միայն զիս մտիկ պէտք է ընեն, վի- ճարանակեան չեմ գար...» ինչ կուզէր պատուելի, տաւարներու զլխուն պատգամներ որոտայ, թէ ոչ թուցցի տուտուլին պէս, նախկինը տղային չունակը ձեռքը՝ մեզ առջ ներդրելով, Սուլթանի քեհաթ հանէն տանիլ, անցան, պատուելի, ան- ցան այն օրերը. հայ ազգը շան քա- ըողներու պէտք չունի. ան հոգ- ւով սրտով օտարացած գաւազագետ գայլերու հալածող եղած է. Հայրե- նիքի փրկութիւնը գործնական մա- ճար մարդիկ եւ գոյժ կը պահանջէ:

Վերջացնելէ առաջ սա ալ հարցնեմ քեզ, պատուելի. երկուշարթի օր երկու պատուաւոր ազգայիններու առջեւ, ինչպէս անամօթարար հա- մարակեցար ընելու թէ՛ «Հնչակեան կուսակցութեան մէջ իւր ար պատակ- սուռները եւ յառաջ ընելի» շատ ճիշդ խօսած ես պատուելի, եւ այդ ամե- նավատնար գործը զեւ կը շարու- նակեւ, գիտեմ որ չես ամչնար, ու- թովհետեւ ամչնալ, մեղքընալ բաւե- րը խղճիտ բառարանէն սրբած ես. Շիտակը պատուելի, եթէ կուզես խոնձուրեալը գործել, լուսադոյն միջոցն է հետաճալ այս կողմերէն. Պարիակուէ մի, իծարութեան պատ- եանին մէջ, չենք ուզեր որ քու պիղծ բերելի մէջ ծամմելով ապականեա- մեր Հայաստանը, խոնկի մոմք քե- ղի մի գար մեր ժամը:

Ժիրայր Հ. Գրիգորեան  
1903 մարտ 25  
Շուսիկ

Թ. Գ.—Լսեցինք որ այսօր Գշ- կէս օրուան կառախումքով պատուե- լին մեկնած է Ռուսուզ: Բարի եր- թայ, թերեւս անկէ ալ Դանուբի ճամբով Սուլթանի երազը:

Նոյն

### ՆՈՐ ԳՐԲԵՂ

Խմբագրութիւնս գտացաւ. Երո- պայի Հայ Ուսանողական Միութեան այս տարուան հրատարակութիւն- ներէն հետեւեալները.

1) ԱՊՍՏԱՄԱ ՍՍԱՌԻՆԸ. Մի չը Սասունի նորագոյն դէպքերից. նկա- րագրեց ԳԼԱԿ ՏՍՐՈՆԵՑԻ:

2) ՀԱՅՈՒՆՆԵՐԻՆ. ա) Հեկերիկ, հեղինակ Չախէ Մաշիկի, թարգ- մանեց Գ. Ա. ր) Ճակատաւարը, հե- ղինակ՝ Նոյն, թարգմանեցին Քոյրեր Ա. գ) Շեւիկն, հեղինակ՝ Թուրկիեկով, թարգմ. օրիորդ Զ.

3) ՀԱՅՐԵՆԱՍԻՆԻ ՏԱՂԵՐԸ. ընտիր ոտանաւորներ՝ ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԻ. ԵՍԷՆ, հեղինակի պատկերով:

4) ԱՋԱՏՈՒԹԵԱՆ, ԵՐԳԵՐ. ԳԱՄԱՌ- ՔԱՅԻՊԱՅԷՆ, հեղինակի կտակերով:

5) ԼԱՌՄԷՆԻ Է ԼԱ ՄԱՍԷՏՈՒՆ. ճառ ՅՐԱՆՍԻՍ ՏՐ ԲՐԷՍԵՆՍԵՅԻ, արտասանուած 1903 փետրվ. 15-ին՝ Փարիզի Շախ-օ-սոյի թատրոնին մէջ ի նպատակ Հայաստանի եւ Մակեդոնիոյ գումարուած հրատարակչային մեծ ժո- ղովին:

6) ԼԷ ՇԱՌՄԷՆԻԷՆ Է ԼԱ ՌԷՅՈՐՈՒ ՏՐ ԼԱ ՌԻՒՐԻԻ. ճառ Ա. ՎԱՆՏԱԼԻ, արտասանուած 1897 փետրվ. 2-ին:

7) ԼԷ ՍՈՒՅՐԱՆՍԻ ՏԻՒ ՓԵՏՓԼԸ ԱՌՄԷՆԻԷՆ Է ԼԸ ՏՐՎՈՒՍԻ ՏՐ ԼԷՕ- ՐՈՓ. ֆրանսերէն թարգմանութիւնը էՏ. ՊԷՐԸՄԱՅԷՆ ճառին՝ արտասան- ուած 1902 յունիս 26-ին Պէրլինի մէջ:

8) Նոյնը՝ գերմաներէն:

9) ԱՐՄԷՆԻԸՆ ՌԻՆՏ ԷՕՐՈՓԱ ճառ ԺԷՕՐԺ ՊՈՒՆԻՆԻՍԻՒՐ արտասանուած 1903 փետրվ. 2-ին Պէրլինի մէջ, գերմ- մաներէն:

Աւելորդ է ծանոթանալ այն կէտի վրայ թէ՛ Եւրոպայի Հայ Ուսանողա- կան Միութիւնը սրբան օգտակար պի- տի ըլլայ իր այս կարգի հրատարա- կութիւններով՝ Հայկական Մեծ գոր- ծին:

Մենք կը դժայինք որ ըլլոր հայերն ու հայուհիները կարգային այս հռան- զուս եւ հայրենասէր Միութեան գըր- քայինքը, որոնք անխաբարս գոյ- ներով կը պատկերացնեն մեր տա- ուսպանքին մեծութիւնը եւ մեր պայ- քարին վեհութիւնը կարողային «Հա- յուհիներին» որ թանկագին դասեր կը պարուենակէ հայրուն համար. կայ դային մանաւանդ «Ապստամբ Սասունը», որ հիանալի մէկ կտորն է Սասունի այն գերմարդկային գիւ- ցազներգութեան, զոր ապրեցան այս առիժ հայերը նորագոյն ժամանակ- ներու մէջ:

ԻՍԱՌՈՒ.—Վերայիշեալ գրքայինե- րէն գնել փափաքողք կրնան զիմել հետեւեալ հասցէին՝ Իւնիօն Տիգրի- ցիան Արմենիէն Տր շիօրօյի. Սիւ Տր շիօրօյի-Տր-Շիօրօյի, 2, ԺԷՆԷՅԻ (Սուլա): Գիւներն են հետեւեալները. տոալին, 2 ըդ. 3 4 և 6 ըդ. գրքայիներուն համար 20-ական սնթ. 5, 7 և 8 ըդ. 40 ական սնթ. և 8-ըդ ին համար 50 սնթ.

### ՏԵՂԵԿ ԱՐԲԵՐ

ՇՈՒՄԼԱՅԷՆ.—Վերջերս տեղացի ազ- գայնոց մէջ չեն հետզհետէ վերնալու վրայ են կուսակցական հակառակու- թիւները. Մեզի համար շատ ու- բոխաւ թերեւոյժ մըն է ստիկայ. վերջին անգամ վարժ. խնամակալու թեան սարքած ձերուանդ Բ. Ի թա- տերական ներկայացուցը եւ երկու կողմի կուսակիցներուն ալ հոն ներ-

կայ գտնուելը փայլուն մէկ ապացոյցն է մեր բաժին: Մեզի համար ամենէն ցանկալին համերաշխ գործակցու- թիւն է: Հարկ է մոռնալ ամէն կու- սակցական նկատում մեր սպաքայ սերնդեան շահերուն առջեւ. Հարկ էր որ ձեռք ձեռքի տանք կրկնապա- տիկ բարեքնիքով դարմանելու հա- մար անցեալին յարա աղէտարար սը- խութիւնը եւ ցաւալի վեհաները, որ արգարութեան անունովը գործուե- ցան:

— 0 —

ՊՐԱՅԻԼԱՅԷՆ.—Պուրկազ քաղաքի հայ պանդխտներէն ծանօթ վար- դան անուն անձը, որ մէկուկէս տա- րի է ֆոնսթանցա կը գտնուի եւ որ նաւահանգիստին գործերը իր ձեռքն առած ըլլալով գինեքը բաւական կու- րած էր, 6-7 ամիս առաջ նամակ գրած էր իր գերագիններուն որ հոս գան. որովհետեւ շատ գործ կայ եղեր եւ ինքն ալ չալուչ է. խեղճ գերագինները շուտեցին պայ- մաններէն խաբուած՝ արտ կամ եզ, ինչ որ ունեցեր են, ծախելով հա- սած են մինչեւ Տրապիզոն, Հոն կա- ուովարութիւնը պատրուակելով թէ անցագրերն ին կեղծ է. մարդ զրուս 2 ոսկի տուգանք անելով իրր թէ Խանձի Մկրտիչին երախտաւորութեան տակ թող կուտան: Կերթի ճիւղն ալ միամիտ գերագիններէն ստորագ- րուած այլեւ ալ մուրհակներ առնե- լով նաւ կը գնէ գէպի ֆոնսթանցա: Խեղճերը հիմա հոս անօթի կը թա- փառին: Յիշեալ խանձին հոս եկաւ իր առնելիքները գանձելու, բայց շատերը մերժեցին վճարել, որովհե- տեւ մուրհակները ակամայ պարտա- տուներ են ստորագրել. իսկ Մկր- տիչը կրպակոնայ իրենց թէ՛ եթէ ան- դամ մըն ալ Տրապիզոն երթան՝ ա- մեն տեսակ միջոցներու պիտի զիմէ իր կիրքը յազեցնելու համար:

3-4 ամիս առաջ երզնկացի կարա- պետ անուն երիտասարդ մը կը մեկ- նի Տրապիզոն, հարեմիք երթալու համար, Մկրտիչը իմանալով ասիկայ (իրր թէ կարպակոն իրեն պարտք ունի եղեր) կերթայ կառավարութեան կը մատնէ զինքը իր խոսվարար, կառավարութիւնը յիշեալ երիտա- սարդը նորէն նաւ կը գնէ գէպի Պա- թուս, ուր չընդունուի եւ սուսա- կան նաւով կը տարուի մինչեւ Պօլիս, Այս քաղաքը ինքը խանձին պատմեր է հոս սրճարաններու մէջ. ալ չենք գիտեր թէ ինչ եղաւ խեղճ երիտա- սարդը:

Թախանձագին կը խնդրենք մեր ըլլոր հայրենակիցներէն՝ որ զգուշա նան այս տեսակ հրէններէն:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Թան» իր 4 ապրիլի թուին մէջ շահեկան խմբագրական մը գրած է «Պալքաններու» վրայ զոր կ'ը ներկայացնենք մեր ըն- թերցողներուն համառօտակի:

«Միթրովիցայի պաշարումը կրկնակի շահեկան է. կը գրէ «Թան». նախ անկա կապացու- ցանէ թէ Արնաւուտները այն աստիճան զայրագնած են որ և ոչ իսկ ի նկատի կուզեն առնել իրենց տէրը ու խնայել անոր. և յետոյ, սուսական հիւպատոսը ծոնրապէս վիրաւորուած ըլլալով

Բէթերոպուրկի դահլիճը մէկէն ի մէկ գործի կը խառնուի:

Ուրիշ աւելի վրագովիչ կէտ մըն է Պօլսոյ ու նոյն իսկ երկաթի մէջ գտնուող անոնց հայրենակիցնե- ներուն հոգեկան վիճակը. Սուլ- թանին անձնական պահակազօր- քը ամբողջովին Արնաւուտներէ կազմուած, խանդավառ կը ծա- փեն իրենց հայրենակիցներուն ընդդիւմը և Միթրովիցայի ար- իւնահեղ ընդհարումը: Ահաւա- սիկ իրօրութիւն մը որ շատ վր- գովեցուցիչ է Սուլթանին համար որուն կեանքին վրայ կը հսկեն արնաւուտները:

Կերծւայ թէ բարենորոգում. ներք, կամ անճարակութեամբ, կամ կանխամատու թեամբ, գոր- ծադրուիլ սկսեր են այնպիսի կերպ վ մը որ, զայրոյթն ու ա- նապահօժութիւնը իր գագաթ- նակէտին հասնի: Գոտովայի նա- հանգին մէջ Հիլմի փաշային աչ- քերուն տակ ուստիկանութեան վերակազմուած այնպէս մը կա- տարուած է որ, ցարդ լոկ ար- իւնահեղ ընդհարումներ առաջ բերած է իսլամ և փոքրամի- քի խտունայ ընտրեալներուն մի- ջեւ:

Երբէք չափազանցութիւն չէ ըսիլ որ զայրոյթը երկուստեք սարսափելի է: Խալափները վրէժ կը պոռան, քրիստոնեաները կը սարսուան ոչ միայն Եւրոպայէն ակնկալածնուն յուսախաբութե- նէն, այլև իրենց նկատմամբ ցոյց տրուած վարմունքէն:

Մակեդոնիան կատաղի ու մար- դասպան ատելութեանց սուպա- րէզ ըլլալու վրայ է. վազը թե- րեւս ըլլայ զիւային հանգիսա- վայրը այս տեղորաններուն, ու որոնց ճիշդ նմանին ականատես եղած է քաղաքակիրթ եւրոպան Պուլկարիոյ և Հայաստանի մէջ:

Եւրոպական պետութիւնները ամենածանր պատասխանատու- թեան տակ պիտի մնան, եթէ տակաին շարունակեն Ապտիւլ Համիտին ճնշողական միջոցի գիմելու խորհուրդ տալ:

Հերիք է որքան դիւանագէտ- ներուն խօսքերը այնքան հրէ- շային բարբարոսութեամբ կը մեկնուին. Հերիք է, երբ հը- լու եւ կանոնաւոր զինուորներու պէտք ունեցող ամենափափուկ գործի մը համար, Անատոլիէն համիտիյէ քիւրտ զօրագնդեր կը բերուին, որոնց շահատակու- թիւններուն կրկնուելը չուզեր տեսնել եւրոպան:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հանրածանօթ հնազգէտ հա-
յազգէտ Ն. Մառ սուսայ Լկայս.
հնազգէտական արեւելեան կա-
ճառի մէկ նիստին մէջ զեկու-
ցում մը կարգացրեր է իր այն
ճանապարհորդութեան մասին.
զոր ըրաւ 1902 ին Երուսաղէմի
Ս. Յակոբ և Ս. Կատարինէ վան-
քերուն մէջ պահուած հայերէն և
վրացերէն ձեռագիրները ուսու-
նասիրելու համար: Ամենէն կա-
րեւոր ձեռագիրներն են եղեր Ս.
Գրիգոր Լուսաւորիչի և Վրաստա-
նի լուսաւորիչ Ս. Նունէի մասին
գանձուղները:

— Ս. Հայրապետը հաստատած
է Ամերիկայի հայոց առաջնոր-
դութեան համար մասնաւոր կա-
նոնադրութիւն մը, որով պիտի
զեկավարուին Միացեալ Նահանգ-
ներու հայկական եկեղեցիները:

— Երուսաղէմի ձրիակեր վար-
գապետներուն յարուցած խայ-
սառակ վէճերու մասին Պօլսոյ
պատրիարքարանը ստացեր է նոր
տեղեկագիր մը, որ կը հաստատէ
թէ բոլոր վէճերուն հեղինակնե-
րը իրենք վաղ պատերազմին են
եղեր: Պատրիարքարանի այս մա-
սին հարկ եղած պաշտօնագիրը
զրկած է Երուսաղէմի պատրի-
արքին և միանգամայն վանքին
13 վարդապետներուն ուղղած է
անոնց ընթացքը պախարակող
դիտողագիրներ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանը մեծապէս յուզուեր
է Միթրովիցայի մէջ ուսական
հիւպատոսին վրայ եղած սպանու-
թեան փորձը լսելով, մանաւանդ
երբ կիրմանայ թէ կանոնաւոր բա-
նակին ալպանացի մէկ զինուորը
եղած է վիրաւորողը, ոչ թէ ա-
պստամբ ալպանացի մը: Այս զի-
նուորը հին սերպիացի մըն է և
ուզած է սպաննել հիւպատոսը
Միթրովիցայի պաշարման ատեն
սպաննուած իր մէկ ազգականին
վրէժը լուծելու համար: Ինքն ալ
ժանրապէս վիրաւորուած է հիւ-
պատոսին ընկերացոյ քաղաքնե-
րէն և զինուորներէն:

Ռուս հիւպատոսը կը դարձան-
ուի Իւսթրալի հիւպատոսարանին
մէջ: Սուլթանը Բամպուրոզլու
նշանաւոր վիրաբոյժը զրկած է
զայն դարձանելու համար:

Շէմսի փոշա զօրավարը հրա-
հանգ ստացած է անմիջապէս
զսպել ալպանացիները:

— Այն լուրը թէ Էրզրումէն
Պօլիս ու անկէ Մակեդոնիա փո-
խադրուեր են 4 համիտիզ զօրա-

գունդեր, մեծ յուզում պատճա-
ռեր է Երուսաղի գիււնագիտա-
կան շրջանակներուն մէջ: Բայց
Սուլթանը ապահովուցրեր է դե-
պանները թէ այդ տեսակ փո-
խադրութիւն չէ եղած այլ միայն
հրահանգ տրուած է համիտիզ-
ներուն, պատերազմական պատ-
րաստութիւններ տեսնել:

— Սուլթանին հրամանով, իբր
վերջնագիր ալպանիա զրկուած է
մասնաւոր պատուիրակութիւն մը,
բաղկացած մուլլայէ մը զօրավարէ
մը, և երեք ալպանացի պաշտօն-
եաներէ, որուն պաշտօնը պիտի
ըլլայ Ալպանիոյ մէջ մաքրել
հանգարտեցնել: Սակայն հուսա-
նական չէ որ այս պատուիրակու-
թիւնը ալպանացիներէն ընդուն-
ուի: Արդէն լուր կայ թէ ձաքո-
վայի և Իփէքի ալպանացիները
իրենց Միթրովիցայի հայրենա-
կիցներուն պարտութեան վրէժը
լուծելու համար 18,000 հոգի
չափ հաւաքուեր են յարձակողա-
կան գիրքի մէջ:

Թէեւ պալատէն կը վստահեց-
նեն թէ երեք օրէն աւելի չը պի-
տի տեսնել խառնակութիւնները,
բայց ասիկա շատ ստոյգ չերեւիր:
Թուրք կառավարութիւնը անակն-
կալօրէն խլամպստամբութեան
մը դէմ գտնուելով, իր վիճակը
աւելի ծանր է, քան եթէ լոկ
քրիստոնեայ ապստամբութեան մը
հանդէպ ըլլար:

— Թրքական ազբերներէ կը
տեղակացուի որ կանոնաւոր զօր-
քերը ձաքովայի և Իփէքի ապս-
տամբներուն վրայ կրակ ըրեր են
և 1000է աւելի ալպանացիներ
վիրաւորեր են: Ընդհանուր ապս-
տամբութենէ մը կը վախցուի:

— Միթրովիցայի վէրաւոր-
ուած հիւպատոս ժեթրպիինի վի-
ճակը աւելի գէշցեր է: Հիմա
թոքատապալ ունի:

— Գերմանիոյ Վիլհէլմ կայսեր
անգրասիկ զաւակը Կիյոմ իշ-
խան և եղբայրը Էյիթէլ Ֆրէտրիֆ
իշխան, ամսոյ 24ին Պօլիս հասն-
ը և շատ փառաւոր հանդէսներով
ընդունուեր են:

ՄԱԿԵՆՈՒՍ

Քիւսթէնարիէն կը հեռագրին
«Վէչէրնա»-Բօշթաճիին թէ Ա-
նասթաս վոյվոսայի խումբը Պէ-
րօլօ գիւղին քովէն անցած ատեն
տաճիկ զինուորներու պատահե-
լով իրարու վրայ կրակ ըրեր են:
Զինուորները չորս հոգի կորսն-
ցնելով կը փախին և մօտիկը
գտնուող թրքական բանակին մէջ
կը պատմեն եղելութիւնը: Ան-
միջապէս վաշտ մը զօրք և ահա-
զին խումբ մը պաշրպօւթներ
կը հասնին Պէրօլօ գիւղը և հորի
ու ջարդի կը մատնեն զայն: Յե-
տոյ կիյնան ապստամբներու ե-
տեւէն և իրարու պատահելով

երկու կողմէն կոտորի կոխ մը
կը սկսի: Պուլկար ապստամբնե-
րուն օգնութեան կը հասնին Բէ-
րօ վոյվոսան և Բարապիպէրօլի
իրենց խումբերով: Ապստամբ-
ները կրցեր են սքանչելի դիւրքեր
գրաւել և թուրքերը չէին հա-
մարձակիր յարձակել խումբերուն
վրայ վախնալով որ տիրամիթ
աումբեր ունին: Կռիւը տեսած է
չորս օր: Զորորդ օրուան գիշե-
րը խումբերը յաշուեր են զօր-
քերու շղթան խղիլ և արիւնի ու
գիւնակներու մէջլէն անքնելով հե-
ռանալ:

Ապստամբները ունեցեր են 6
վիրաւոր և 2 մեռած, իսկ տա-
ճիկներուն կորուստը կը կարծուի
թէ 300ի չափ մեռած ունին և
նոյնչափ ալ վիրաւոր:

Պուլկար թերթերը կը պատմեն
շատ մը ուրիշ այսօրինակ
ընդհարու մտեր:

ՊՈՒԿԱՐԻՍ

«Վրէնի Իզվէսթիա» զինուորա-
կան թերթը կը հրատարակէ
պատճէնը Ն. Ա. Բ. Իշխան Ֆէր-
տինանտի մէկ նամակին, որով
չնորհակալութիւն կը յայտնէ
նախկին պատերազմական նա-
խարար զօր. Բարբիքօֆին՝ անոր
մատուցած ծառայութեանց հա-
մար և ցաւ կը յայտնէ որ հրա-
ժարեցաւ:

ԶԷՐՆԱ—ԿՕՐԱ

Ռուսիոյ կայսրը Բարատաղի
իշխանին 8 հատ արագահարուած
թնդանօթ և ուղւմամբերք նուիր-
ելուն առթիւ ինքնապիր նամակ
մըն ալ ուղղեր է, որով կըսէ թէ
այդ նուէրը ապացոյց մըն է Ռու-
սիոյ բարեկամութեան և խաղա-
ղասիրութեան: Զէրնա—Կօրայի
մասին:

Յ Ո Ւ Ն Ս Ս Ա Ն

Պէրլինի «Վոսիչէ Զայթունկ»
թերթը Աթէնքէն կիմանայ թէ
յոյն կառավարութիւնը խիստ
հրամաններ տուած է Լարիսայի
և Թրիքալայի իշխանութիւննե-
րուն՝ հսկել սահմանադիւրսի վրայ
և զինուոր զօրութեամբ արգիլել
պուլկարներու և արգիլուած իրե-
ղէններու անցքը:

— Աթէնքի թերթերուն ըսա-
ծին նայելով թեսալիոյ իշխանու-
թիւնները 27 պուլկարներ ձեր-
բակալած են Օսմանեան սահմա-
նագլուխն անցնելու ուղիները հա-
մար:

ՀՈՒԱՆՏԱ

Ամսթէրտամէն կը հեռագրեն
թէ գործաւորներու կօմիտէն ո-
րոշեր է ընդհանուր գործադու-
լ յայտարարել:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Կը խնդրուի ազնիւ ընթերցողներէ
ու եկեղեցական պաշտօնեաներէ տե-
ղեկութիւն տալ. բնիկ գաւառացի
Խաչիկ Սահակեան, 55-60 տարու,
կարճահասակ ու թխագոյն անձին
վրայ:

Սոյն անձը որ երկար ատեն Պօլիս
Հասքէօյ, ճամի ալթը իսկէլէսին նա.
ւալարութիւն ըրած է, 96ի դէպքե-
րուն Աղեքսանդրիա գացած և տարի
մը մնայէ վերջ վառնա եկած ու ՏՈՊ.
Բիշ սրճարանը բաւական ատեն մնա-
ցած է:

Անկէ ի վեր իւր հետքը կորսնցու-
ցած ըլլալով, ամեն անոնց որ յիշու-
անձին վրայ պիտի հաճին տեղեկու-
թիւն տալ «Շարժում»-ի խմբագրու-
թեան, կը մատուցանենք մեր կան-
խակալ շնորհակալութիւնը:

Է. Ե. Ը.

Ն. ՄԱԿԱՏՈՒՓ

Պ. Օ. Մ. Քէլֆիքիա. Եգիպտոս.—
Սուսան: Սաացանք Զեր նամակը
և զրկած գումարը: Աս համարէն
սկսեալ կը հրատարակուի Մեր
կարծիքով առ այժմ այսքանը
բաւական է: Ժամանակ մը վերջը՝
եթէ հարկ ըլլայ կրկնեցէ՛ք ճ-
թէ կուզէք:

Պ. ԷՄԻԼ ՇՂԱՐՆԵ ԿՆՑ.— յճար-
ժում» այս համարն արդէն լեց-
ուած ըլլալով՝ Զեր յօդուածը յի-
տաձգեցինք. միւս անգամուն՝ կը
սպասենք ձեր զրկելիքներուն:

ՏՕԲԹԵՕՐ Ն. Կ. ՔԱԳԻՈՐԵԱՆ

Նախկին բժիշկ Ս. Փ. Ազգ. հի-
ւանդանոցի Կ. Պօլսոյ. նախկին նա-
հանգային և հիւանդանոցներու
բժիշկ պուլկարական կառավարու-
թեան:

Վարդիշեալ բժիշկը երկար տարի-
ներէ ի վեր արհեստին մէջ իր փո-
ճառութեամբ և հմտութեամբ ար-
դէն ծանօթ՝ և երկու տարի առաջ
ևս վիճնայի համալսարանի հիւան-
դանոցներու մէջ գործնական կեր-
պով աշխատելով, այժմ հաստատու-
ած է ի Սօֆիա. Պուլկար Տօնսուֆօֆ
թիւ 16

Մասնագէտ հիւանդութեանց կա-
նանց և տղայոց, նոյնպէս արանց
և կանանց զանազան ներքին հի-
ւանդութեանց:

Հիւանդ կընդունի ամէն օր ժամը
10-12 և 2-4 (ը. Ե.)

Զորեքշաբթի օրերը ձրի կը դա-
մանէ:

Հիւանդները վերջին ծայր ուղղ-
րութեամբ կը գնուին:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна